

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԱՈԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԹԵՎՖԻԺ ՖԻԲՐԵԹԻ

Օսմանյան կայսրության առաջադեմ մտածող բանաստեղծ, խմբագիր, հրապարակախոս, մանկավարժ Թեֆիք Ֆիքրեթը (1867-1915թթ.) լավագույնս անդրադարձել է պետության և հասարակության զարգացման գործում երիտասարդության՝ որպես նոր հայացքների ու մտեցումների, նոր գաղափարների կրողի ու իրականացնողի առաքելությանը, դերին ու նշանակությանը: Ասվածն իր արտացոլումն է գտել «Հալուքի տետրը» («Halûk'ın Defteri») ժողովածուի մեջ՝ անվանակոչված հեղինակի միակ ոչդու՝ Հալուքի պատվին, ում ժամանակի երիտասարդության մարմնավորում կարելի էր համարել:

1911թ. տպագրված ժողովածուի մեջ Թեֆիք Ֆիքրեթը գետեղեց իր դեմոկրատական և լավատեսությամբ լեցուն բանաստեղծությունները, որանցում արտահայտել է պայծառ տրամադրություններ հայրենիքի երջանիկ ու փայլուն ապագայի և ճակատագրի նկատմամբ: «Հալուքի տետրը» ժողովածուի մասին թուրք հեղինակ Ռուշեն Էշրեֆը գրել է. ««Հալուքի տետրը» երիտթուրքական հեղափոխությունից առաջ և հետո այս երկրի (Օսմանյան կայսրության - Տ.Պ.) երիտասարդության մասին Թեֆիք Ֆիքրեթի մտորումների, զգացմունքների, հույսերի և իդեալների բանաձևումն է»¹:

Երիտասարդ Թեֆիք Ֆիքրեթը դարձնում դասավանդել է գեղագրություն, թուրքերեն ու ֆրանսերեն (մասնավորապես աշխատել է Գեդիկ փաշա դարձնում): Այնուհետև երկար տարիներ մանկավարժական գործունեություն է ծավալել Ռոբերտ քոլեջում և նշանավոր Գալաթասարայի լիցեյում՝ նաև ստանձնելով վերջինիս ղեկավարությունը: Ղեկավար լինելու ժամանակահատվածում (1908-1909 թթ.)՝ նրա օրոք Օսմանյան կայսրության այս կարևոր կրթական հաստատությունը մի շարք բարեփոխումներ ապրեց:

¹ Ruşen Eşref (Ünaydın), *Tevfik Fikret, Hayatına Dair Hatıralar*, İstanbul, Hilal Matbaası, 1919, s. 90

Ընդ որում, այդ շրջանում լիցեյում որպես ընտրովի առարկա մտցվեց նաև հայոց լեզուն:

Թեֆիք Ֆիքրեթը մեծ հույսեր էր կապում հատկապես երիտասարդների հետ, քանզի վերջինիս բնորոշ է ակտիվությունը, լավատեսությունը, դեպի նորը հակվածությունը, լավագույն ապագայի նկատմամբ համոզվածությունը: Որպես ինտելեկտուալ և ստեղծագործական ներուժ՝ երիտասարդությունն ունակ է նոր գաղափարների, ավելի նախաձեռնող է, հակված է նոր ապրելակերպի կերտման: Նա պահպանողականության ու լճացման հակառակորդն է: Պետեն իր ստեղծագործություններով փորձում է դաստիարակել առողջ մտածելակերպ ունեցող սերունդ, որը կկարողանա կյանքի կոչել ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու իր իրավունքը և որակական նոր մակարդակով վերարտադրել նախորդ սերունդների ժառանգությունը:

Ուշադրության է արժանի «Հալուքի հավատամքը» («Halûk'un Âmentü'sü») բանաստեղծությունը, որում հեղինակը մարդու սեփական ուժերին հավատալու, բանականության, առաջադեմ գաղափարների, եամամարդկային եղբայրության ջատագով է: Այստեղ նա պատմում է երկիրը դրախտի վերածելու իր ցանկությունների մասին՝ որպես գլխավոր գործող անձ մատնանշելով նրան, ով ի գործու է բարեկերտել իր երկիրը՝ չապավինելով միայն վերին ուժերին: Բանաստեղծը, հրաժարվելով ավանդապաշտությունից, զարգացնում է կոսմոպոլիտական գաղափարներ: Նրա կարծիքով՝ անկախ ազգային պատկանելությունից, որպես հայրենիք պետք է ընդունել ողջ մարդկության համար հայրենիք հանդիսացող երկրագունդը: Այս առումով ուշադրության են արժանի պոետի հետևյալ խոսքերը. «Երկրագունդը հայրենիքս է, մարդկության ցեղը՝ ազգս» («Toprak vatanim, nev'-i beşer milletim...»): Բնարկե, պոետի նման մոտեցումները չէին կարող քննադատության չարժանանալ թյուրքականության գաղափարախոսների կողմից: Չախ հայացքների տեր թուրք լրագրող, գրող, հրապարակախոս Սաֆիհա Սերթելը գրում էր, որ Թեֆիք Ֆիքրեթին այս խոսքերի համար մեղադրել են հայրենամերժության մեջ, երան որակել

որպես «անհայրենիք»²: Թեֆիք Ֆիքրեթի նման արտահայտություններն ընկալվել են նույնիսկ որպես անարխիայի տարածման վտանգ հարուցող: Սերթելը նկատում էր, որ Թեֆիք Ֆիքրեթի համաշխարհային հանրության գաղափարը, համաձայն որի՝ երկիրը ճանաչվում է համընդհանուր հայրենիք, իսկ բոլոր մարդիկ՝ եղբայրներ, իրականում ոչ թե հայրենամերժություն էր, այլ մարդկային բարձրագույն ձգտումների մարմնացում:

Թեֆիք Ֆիքրեթ գրում է.

Ebna-yı beşer birbirinin kardeşi... Hulyâ!

Olsun, ben o hulyâya de bin canla inandım³.

Մարդու զավակները միմյանց եղբայր են... Պատրանք (երևակայություն)

Թող այդպես լինի, ես այդ պատրանքին էլ հազար հոգով հավատացի:

Թեֆիք Ֆիքրեթն առավել քան համոզված է, որ մարդկությանը միավորող, նախապաշարմունքներից, ավանդապաշտական զգացումներից ազատող ուժը կրթությունն ու գիտելիքն են, և հույս է հայտնում, որ մի օր երկրում կտիրի իմացության ուժը.

Bir gün yapacak fen şu siyah toprağı altın,

Her şey olacak kudret-i irfanla...inandım.⁴

Մի օր գիտությունն այդ սև երկիրը ոսկի է դարձեցնու

Ամեն ինչ իրֆանի (գիտելիքի, իմացության-Տ.Պ.) ուժով է լինելու... հավատացի:

Ըստ Թեֆիք Ֆիքրեթի՝ երիտասարդ սերունդը պիտի հաղորդակցվի համամարդկային արժեքներին, լինի դրանց կրողն ու կարողանա կամք գործադրել դրանք կենսագործելու համար: Միայն նման երիտասարդություն ունեցող հասարակությունը կարող է ունակ լինել՝ իրական բարեվիճիքի: Բանաստեղծը հարցադրում է անում՝ որքանո՞վ է թուրք երիտասարդությունն իր ապագան կապում իր հայրենիքի հետ և որքանո՞վ է պատրաստ իր ուժերը ներդնել իր իսկ հայրենիքի բարգավաճման գործում, իր իսկ

² Sertel Sabiha, *Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi*, İstanbul, Yurt ve Dünya Yayınları, 1946, s. 101

³ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Âmentüsü*, İstanbul, Çağrı Yayınları, 2006, s. 30

⁴ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Âmentüsü* s. 31

հայրենիքում ազատ ապրելու ու արարելու համար: Հալուքը, հանդես գալով որպես նոր երիտասարդության մարմնացում, մեկնում է Եվրոպա՝ կրթություն ստանալու, ապա հայրենիք վերադառնալով՝ «ձեռք բերած գիտելիքներով լուսավորելու երկիրը»:

«Հալուքի հրաժեշտը» («Halûk'un Vedâ'sı») ստեղծագործության մեջ բանաստեղծը զուգահեռներ է անցկացնում Ստամբուլի ու Շոտլանդիայի միջև, ուր Հալուքը մեկնել էր ուսումնառության: Թուրք գյուղականագետ Աբդուլլահ Ուլմանը նկատում է, որ «Հալուքի հրաժեշտը» ստեղծագործության մեջ Թնֆիք Ֆիքրեթը Ստամբուլը կապում է բնության (tabiat), իսկ Շոտլանդիան քաղաքակրթության (medeniyet) հետ⁵: Մառախլապատ, անձրևոտ, ձյունոտ, սառցեպատ» Շոտլանդիան քաղաքակրթության պայմանների տեսանկյունից լրջության և եռանդի» (Cidd u himmet), «լրջամտության ու ազատության» (vakaar ü hürriyyet) երկիր է, իսկ «գուցն դրախտի չափ թարմ է, հոգևոր կանքի հետ կապված» Բոսֆորի կլիմայով Ստամբուլը «դատարկագլուխ» (âvâre), «անտեղյակ» (bî-haber), «ձանձրացած, հոգնած» (bîzâr) մայրկանց անկյուն է: Նա մեծ ցավով արձանագրում է այդ դառը ճշմարտությունը. «Acı şeyler, Halûk, fakat gerçek! /Դառը բաներ են, Հալուք, սակայն իրականություն է»⁶:

Թնֆիք Ֆիքրեթը իրեն համեմատում է անցյալի հետ, որդուն ապագայի: Հեղինակը զարգացնում է սուսի ծառի կերպարը: Այն խոյնիդանշում է Օսմանյան կայսրության փառահեղ անցյալը: Դարեր շարունակ այս ծառը մեծանում, ծաղկում, փթթում է.

Hani bir gün seninle Topkapı'dan
Geliyorduk; yol üstü bir meydan,
Bir çınar gördük; enli, boylu, vakûr
Bir ağaç; hiç eğilmemiş, mağrûr
Koca bir gövde; belki altı asır
Belki ondan da fazla, dalgın; ağır,
Kaygısız bir ömür sürüp gelmiş.⁷

⁵ Uçman Abdullah, *Tevfik Fikret, Halûk'un Defteri*, İstanbul, Çağrı Yayınları, 2006, s. IX

⁶ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Vedâ'sı*, s. 35

⁷ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Vedâ'sı*, ss. 35-36

Հիշո՞ւմ ես, մի օր քեզ հետ թոփափըից
 Գալիս էինք. ճանապարհին մի հրապարակ,
 Մի սոսի տեսանք՝ փարթամ, բարձր, հաղթանդամ
 Մի ծառ է. երբեք չի կորացել, հպարտ
 Հսկա մի բուն. գուցե վեց դար,
 Գուցե տասից (դրանից) էլ ավել, մտասույզ, ծանր,
 Անվիշտ մի կյանք է անցկացրել:

Դարերի ընթացքում մեծացող, ապա «փտող պետության»
 խորհրդանիշ հանդիսացող այս սոսին բանաստեղծի մեջ խոր ցավ է
 արթնացնում: Օտող սկսում է նեխել.

Fakat ayyûka ser çeken, uzanan
 Bu mehâbetli gövde çırpıplak,
 Ne yeşil bir filiz, ne bir yaprak...
 Kuruyor; âh, pek yazık! Şu derin
 Şerha böğründe belki bir hâin
 Baltanın, bir gazabın yıldırımın
 Zehridir... Söyle, ey çınar, bağrın
 Hangi odlarla yandı? Hangi siyâh
 Kurt içinden kemirdi? ⁸

Սակայն գլուխը երկնքին հասցնող, ձգվող
 Այս վեհասքանչ բունը մերկ է,
 Ո՛չ կանաչ մի շիվ, ո՛չ մի տերև...
 Չորանում է, ախ, շատ ափսոս: Այդ խոր
 Կտրվածքը կողքիդ հնարավոր է մի դավաճան (վնասատու)
 Կացնի, մի ցասկոտ կայծակի
 Թույնն է... Ասա՛, հե՛յ սոսի, կուրծքդ
 Ո՞ր կրակներով է այրվել: Ո՞ր սե
 Որդը ներսիցդ կրծեց-կերավ:

Թնփիք Ֆիքրեթը համոզված է, որ կյանքի ողջ ընթացքն
 ուղեկցվում է դժվարություններով ու դառնություններով, անցնում
 պայքարի ուղիներով: Սակայն նեղություններին ու

⁸ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Vedâ'i*, ss. 36-37

դժվարություններին դիմացողը, գաղափարի հետեից գնացողը վաղ
թե ուշ հասնում է իր նպատակին.

Koşan elbet varır; düşen kalkar;

Kara taştan su damla damla akar,

Birikir, sonra bir gümüş göl olur;

Arayan hakkı en sonunda bulur...⁹

Վազողը, իհարկե, հասնում է, ընկնողը՝ վեր ելնում,

Սև քարից ջուրը կաթիլ-կաթիլ հոսում է,

Հավաքվում, հետո մի արծաթե լիճ է դառնում,

Փնտրողը ճշմարտությունն ամենավերջում է գտնում:

«Վաղը» («Ferdâ») բանաստեղծությունը կրկին նվիրված է
երիտասարդներին. նախաբանում այդպես էլ գրված է «Այսօրվա
երիտասարդներին» («Bugünün gençlerine»):

Բանաստեղծը գրում է.

Ferdâ senin; senin bu teceddüd, bu inkılâb...

Her şey senin değil degilmi ki zâten?.. Sen, ey şebâb....¹⁰

Ապագան (վաղը) քոն է, քոն է այս
արդիականացումը, այս հեղափոխությունը...

Եվ արդյոք ք ամեն ինչ քեզ չի պատկանում: Դո՛ւ, հե՛յ,
երիտասարդությո՛ւն...

Թեֆիք Ֆիքրեթը պատմության նոր ժամանակաշրջանի բա-
ցումը, հայրենիքի հույսն ու ապագան կապում է երիտասար-
դության հետ, որի պատվի գործն է վերավախել կյանքը.

Gençler, bütün ümid-i vatan şimdi sizdedir;

Her şey sizin, vatan da sizin...¹¹

Երիտասարդնե՛ր, հայրենիքի ամբողջ հույսը այժմ դուք եք.

Ամեն ինչ ձերն է, հայրենիքն էլ է ձերը....

Երիտասարդների ձեռքում է գտնվում «Դրախտի չափ գեղեցիկ
հայրենիք» («Cennet kadar güzel bir vatan») կառուցելու գործը: Թեֆիք

⁹ Tevfik Fikret *Halûk'un Defteri, Halûk'un Vedâ'sı*, ss. 41-42

¹⁰ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Ferdâ*, ss. 72-73

¹¹ Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Ferdâ*, s. 74

Ֆիքրեթը երիտասարդների պարտքն է համարում հայրենիքի պաշտպանությունը: Բանաստեղծը գրում է, որ «հայրենիքն ուժեղ մարդկանց ուսերի վրա է բարձրանում»: Թեֆիք Ֆիքրեթը կրկին ու կրկին զգուշացնում է, որ ապագան այսօրվանից է հաշիվ պահանջելու: Պոետը համոզված է, որ մարդկությունը պետք է ձգտի դեպի վեր, հասնի երկնքին և երբեք չհագենա, չձանձրանա վեր սլանալուց:

Uğraş, didin, düşün, ara, bul, koş, atıl, bağır;

Durmak zâmânı geçti, çalışmak zâmânıdır!¹²

Բանի՛ր (ջանա՛), ճգնի՛ր (ձգտի՛ր), մտածի՛ր, փնտրի՛ր, գտի՛ր, վազի՛ր (սլացի՛ր), հարձակվի՛ր, բղավի՛ր:

Կանգնելու (անգործության) ժամանակն անցավ, աշխատելու ժամանակն է:

Իր կյանքի վերջին տարիներին Թեֆիք Ֆիքրեթը մտադիր էր թողարկել «Հույս և վճռականություն» անունով հանդես, որն ուղեցույց կհանդիսանար երիտասարդության համար: Մակայն վերոհիշյալ հանդեսը լույս չտեսավ բանաստեղծի հիվանդության պատճառով: «Իմ տունը պատկանում է անկեղծ ու խիզախ երիտասարդներին, ովքեր պատրաստ են պայքարել հանուն ճշմարտության», - գրում է Թեֆիք Ֆիքրեթը, և մատնանշում այն երիտասարդներին, ովքեր չեն պատրաստվի օգտագործել այդ «վեհագույն բառը»՝ հանուն շահադիտական նպատակների, այլ կպայքարեն հանուն ազատ մտքի ցանկացած կեղծ իշխանության դեմ...¹³

¹² Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Ferdâ*, s. 76

¹³ Радий Фиш, *Турецкие дневники, Встречи, Размышления*, Москва, Наука, 1977, стр 58